Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սեպտեմբերի 27-ին, Ս. Գևորգա տոնի ու Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց:

Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը:

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի առթիվ հայրապետական մաղթանք կատարվեց ամբողջ Միաբանության մասնակցությամբ և հոծ բազմության ներկայությամբ: Մաղթանքից առաջ պատշաճավոր խոսք ասաց Տ. Կարապետ Սրբազանը:

Միաբանությունը և ժողովուրդը Վեհափառ Հայրապետի աջն առնելով ցրժանացան նրա օրհնությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 25-ին Հոգևոր ճեմարանում հանդիսավոր նիստ տեղի ունեցավ՝ երրորդ ուսումնական տարվա սկսվելու առթիվ։ Նիստին ներկա էին Ս. Էջմիածնի Միաբանության անդամները, ճեմարանի դասախոսական կազմը և սաները։

Նիստին ներկա էր նաև ՀՍՍՌ Մատենադարանում գիտական աշխատանք կատարելու համար Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պետ՝ Ալեքսի Պատրիարքի կողմից Սովետական Հայաստան գործուղված Նիկոլայ Պետրովիչ Դոկտուսովը։

Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը նիստը բաց անելով ողջունեց դասախոսական կազմին և հին ու նոր սաներին, հաջողություն ու եռանդ ցանկանալով նրանց՝ ուսման երրորդ տարում։

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Գեր. Գլ. Սուրեն և Կարապետ եպիսկոպոսները, Սահակ վարդապետը, դասախոս Դիլոյանը և Մոսկվայից հյուր եկած Նիկոլայ Պետրովիչ Դոկտուսովը։

***

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ այցելեցին վիրաբույժների երրորդ անդրկովկասյան համագումարի, որի նիստերը տեղի էին ունենում Երևանում, մի խումբ մասնակիցներ, դրանց թվում Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք ականավոր պրոֆեսորներ ու բժիշկներ։ Հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Ս. Պատարագին, դիտեցին թանգարանը և ապա թանգարանապետ Տ. Սահակ վարդապետի ուղեկցությամբ այցելեցին Վեհարանը, ուր արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելությանը։

***

Հոկտեմբերի 11-ին, Մ. Թարգմանչաց տոնի երը, Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի դահլիճում կազմակերպվել էր դրական-գեղարվեստական երեկույթ։

Տոնի նշանակության մասին արտահայտվեցին Գեր. Սուրեն եպիսկոպոսը և Տ. Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանը։

Թարգմանչաց տոնի մասին հիմնական զեկուցում արեց ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը։

Երեկույթին մասնակցում էր Հոգևոր ճեմարանի սաներից կազմված երգեցիկ խումբը՝ Տեր Նիկողայոս ավագ քահանա Բովենյանի ղեկավարությամբ։

***

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ այցելեցին Հայկական ՍՍՌ մուսուլմանների կրոնական պետ՝ Ղազի Շեյխ Ալասկյար Մահալամովը և նրա տեղակալ Միրզա Ալակպեր Բայրամովը։ Նրանց ուղեկցում էին Երևանի Դամիր-Բուլաղի մզկիթի գործադիր օրգանի նախագահ Աբաս Ֆարաջևը և Հաբիբ Ռզաբեկովը։

Հյուրերը թանգարանը դիտելուց հետո Մայր Տաճարում ներկա եղան Ս. Պատարագին։ Պատարագից հետո նրանք Տ. Սահակ վարդապետի ուղեկցությամբ այցելեցին նաև Վեհարանը, ուր արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելությանն ու հյուրասիրությանը։